№ 47 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 | 1895 | ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 № 47

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի:

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչեւ 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով խմբագրութեան բառին մի անգամուայ համար 1 շահի» Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:
Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Persé)

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով: «Շաւիղի» բաժանորդագինն է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանի համար 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 5 ֆրանկ:

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկեն ա՛յս պատճառ հետեւեալ հասցէով: Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվիլ: Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէն Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղած թղթակցութիւնները:

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում:

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թշնամի թէ բարեկամ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական հարցի մասին. Նամակ Դավրէժից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի տեսութիւն. Քաղաքական տեսութիւն. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.

ԹՇՆԱՄԻ ԹԷ ԲԱՐԵԿԱՄ

Երբ ամբողջ ժողովուրդը գրգռուած շահամոլներից ու խաբեբաներից, խուժում է Դոկտոր Շտոկմանի տան վրայ, ջարդում նրա լուսամուտները, այն ժամանակ, ճշմարտութիւնը երևան հանող հերոս անյողդողդ նայում է իր մենակ դրութեան վրայ և գոչում «Ամենից ուժեղ մարդը նա է, ով մենակ է»...

Այս դառն և ուժեղ խօսքերը արտայայտում են ճշմարտութիւնը պաշտպանող մի անընկճելի բնաւորութիւն:

Իբսէնի մի թատերգութիւնն է դա և ահա նրա նիւթը: Ժողովրդի ազդեցիկ անձերը, մի քանի դրամատէրներ ջերմուկներ են յայտնագործում իրենց քաղաքում և շահագործում նրանց. բայց Դոկտոր Շտոկմանը գտնում է որ այդ ջերմուկների աղբիւրները թունաւորուած են և սպանում են նրանցով օգտւողներին: Պէտք է երևակայել դրամատէրների և նրանց կապուած մանր ու մեծ, ջերմուկներից շահ ունեցողների աղմուկը. նրանք փորձում են լռեցնել ճշմարտութեան ձայնը, բայց Շտոկմանը ժայռ է, նա հաստատում է իր ասածը և պնդում:

Եւ այն ժամանակ ահա, ժողովուրդը նրան անուանում է «ժողովրդեան թշնամի» և քարեր նետում վրան:

Նա հասարակութեան երեսին է շպրտում իրենց կեղտերն ու ստով լի կեանքը, նա ամենակծու կերպով յարձակվում է կուսակցութիւնների, խմբերի վրայ, որոնք «գայլերի պէս կաղ են տալիս որոշ թւով կենդանիներ» և որոնք չեն յանդգնում միմեանց երեսին ճշմարտութիւնը խօսել. որոնք աշխատում են իրենց իսկ պակասութիւնները ոչնչացնելու բացի, երբ լաւ, երբ գերազանց հաշակել այդ կեղտերը և այդպիսով եօթ ետէ, իրենց սեփական շահերը պաշտպանելու նկատումով, գաղափարների են վերածում շատ անմտութիւններ, խաբեբայ և կեղտոտ միտումներից գոյացող բարոյականներ...

Իսկ Շտոկմանին, ոչպէս ժողովրդեան թշնամի հալածում են, զրկում ամէն ինչից, թողնում մենակ և քարկոծուած մի նախկին ամբոխից...

Նա, որ իր հայրենիքի, իր ժողովրդի լաւը ցանկանալով երևան էր հանում հասարակական գործերի պակասութիւնները, պարզում ճշմարտութիւնը, նրան «րին միայն» երբ ժողովրդի բարեկամ պէտք էր կոչել—անուանեցին ժողովրդին, հասարակութեան թշնամի...

Այդ միևնոյն դրաման է որ ամէն մի րոպէ կրկնվում է մեր հասարակութիւնների մէջ: Ոսկոռների մինչև ծածը փչացած խմբեր իրենց մեղմութիւն և մեղրալից գծուծութիւն քորող անդամներով, իրենց սուրբ մինչև գլուխ ուտութիւններով սնւած կ լմնակիցներով կոկոռց են հանում, երբ քննադատութեան են ենթարկվում իրենց սխալ կասու-թիւնները, երբ երևան են հանվում իրենց սխալները...

Մի հիմնարկութեան պակասութիւնները տեսնող և ծածկողը՝ բարեկամ է համարվում այդ հիմնարկութեան, իսկ նա, ով կամենալով այդ հիմնարկութեան բարելաւութիւնը տեսնել, անխնայ երևան է հանում բոլոր պակասութիւնները, խիստ, զօրեղ լեզւով քննադատում է նրանց—նա համարվում է թշնամի այդ հիմնարկութեան, նրան համարում են քանդող, աւերող...

Այդպիսի հասկացողութիւնն է ահա որ հեռու է պահում մեր հիմնարկութիւններից անկեղծ և ազնիւ գործողներին, մեռցնում նրանց եռանդը և ընդհակառակն հաւաքում է հաստատութիւնների մէջ պակասութիւնները ծածկող փտած անդամներ, ցաւերը քողարկող կեղծաւորներ ու խաբեբաներ...

Անամօթ փարիսեցիներ, որոնք շահագործում են մի անմիտ ամբոխի հասարակական ոգին, որոնք փչացնում են այդ հասարակութեան մէջ քննադատութեան սէրը և որոնք միշտ ապականուած դրութեան մէջ են պահում հասարակական գործերը...

Ասացիր օրինակ՝ մի դպրոցի պակասութիւն, ցոյց տուեցիր որ այնտեղ մուտք են գործել կրթական շառլատաններ և կամ բարոյապէս փչացած հոգաբարձուներ—դու համարվում ես դպրոցի թշնամին: Ինչպէս անձնաւորութեան, նոյնպէս և այդպէս վարւող մամուլին համարում են ժողովրդեան թշնամի, երբ այդ մամուլը երևան է հանում կեղտեր և անխնայ հալածում նրան...

Բայց մօտ է ժամանակը. ապագան կեղծաւորներին և տարտիւֆներինը չէ, այլ նրանց, որոնք քննադատել և շնորհիւ քննադատութեան իրենց շուրջը բարւոքել գիտեն. ապագան նրանցն է որոնք չեն սքողել վէրքեր կամ ծածկել պակասութիւններ, այլ որոնք հրապարակի վրայ կը դնեն ինչ որ վատն է. որոնք անկեղծ կը լինեն և համարձակ...

Եւ ժողովուրդը, վաղ թէ ուշ, փորձով կը տեսնէ որ այդպիսիները ոչ թէ իրենց թշնամիներն են, այլ իրենց իսկական բարեկամները, իրենց բարօրութեան համար ջոհւողները...

Որովհետև այդ ժամանակ կը մեծանայ նոր սերունդը նոր պահանջներով, քննադատական ազատ ոգով ու «կը քշէ գայլերին հեռու, հիւսիս»....

Հ. Ի.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Գաւառներից հասած լուրերը յայտնում են որ բէգիֆ զօրքը մի քանի գաւառներում մերժել է խաղաղութեան օգնելու: Նոր սոսկումներ են տեղի ունեցել Սասունի մէջ:

Temps

Վանի փոխ—հիւպատոս Համպսոնը տեղեկութիւն է տուել Հոկտ. 4/16-ից, որ Սասունում գիւղերի տները մեծ մասամբ շինուել են, որ 10000 լիրա է ծախսուելու և փրկելու են Սասունի բնակիչների կեանքը....բայց ահա թէ Daily News Կ. Պոլսի սեպհական թղթակիցը ինչ է հաղորդում այդ մասին Նոյ. 17-ից:

«Դեսպանատները լուր են ստացել հիւպատոսներից թէ Սասունի ժողովրդին արած բոլոր օգնութիւ՛ը ի զուր անցաւ, որովհետև քիւրդերը ջնջեցին ամէն բան և աւերեցին անգլիական ֆոնդի գումարներով կառուցած բոլոր շինութիւնները»:

«Վան քաղաքին դեռ ևս ձեռք չեն տուել. բայց արդէն ուղղել են թնդանօթները քաղաքի վրա և կտրել են այն բոլոր ծառերը, որոնք արգիլում էին նշան դնելուն:»

Times.

George's Chapel եկեղեցւոյ հովիւ պատ. Ժոզէֆ Ժակսէնը Նոյ. 7-ի մի միտինգի մէջ խօսելով հայերի դրութեան մասին յայտարարեց անգլիական ժողովրդի զայրոյթը և ասաց. այդ դժկոյթը այնքան բուռն է որ հարկաւոր դէպքում 100000 անգլիացիներ պատրաստ են գնալ կռուելու քրիստոնեաներին կոտորող թշւառականների դէմ:

L'Armènie.

«Մի բարեկամ որ նոր է գալիս Կ. Պոլսից, ինձ ասաց որ Սըր Ֆիլիպ Կըրրին, անգլ. դեսպանը, որի հետ նա տեսակցութիւններ է ունեցել, հայերի դրութեան սարսափելի լինելուն շատ աւելի պակաս է հաւատ ընծայում քան ուրիշները և որ նա թիւրքերի մասին շատ նպաստաւոր կարծիք ունի»:

New Budget.

Observer անգլիական թերթը խորհուրդ է տալիս Սոլսբըրիին ծախսել 50 միլիոն Փունդ ստերլինգ և զոհել հարիւր հազարաւոր զինուորների կեանքը՝ փրկելու համար Անգլիայի պատիւը հա-

յոց հովանաւորութեան գործում։ Հայասէր յուզիչները ամէն օր նամակներ են գրում Գլադստոնին և վերջին պատասխաններից մէկում Գլադստոնը բողոք է յայտնել Վիլհելմ Կայսրի հայկական խնդրի առթիւ արտասանած աննպաստ խօսքերի դէմ։

Нов. Время.

Հայերի ձերբակալման և Կ. Պօլսից արտաքսելու դէպքերը այնքան շատացել են, որ անգլիական, իտալական և ռուսական դեսպանները հարկաւոր համարեցին Թիւրք ոստիկանութեան ուշադրութիւնը հրաւիրել այդ երևոյթի վրայ։ Ոստիկանութիւնը հաղորդել է, որ վերջին օրերի ընթացքում միայն 180 հայեր են ուղարկել իրենց հայրենիքը. կասկած կայ որ նրանց բոլորին ծովն են ձգել։

Моск. Вѣд.

Ոչ մի պարագայում Գերմանիան չի համաձայնվում հայոց խնդրի բարեհաջող լուծման համար մի պենիկ (մանր դրամ) ծախսել կամ մի զինուորի կեանքը զոհել. նա իր բոլոր ուժով պիտի աշխատի հայկական հարցը մեռցնել և այդ պատճառով էլ նա Թիւրքական կայսրութեան ամբողջութիւնը պահպանելու սկզբունքին է ռուսիոյ հետ։

Daily News.

Ամերիկական սենատում հասարակապետական կուսակցութիւնից մի սենատոր բանաձև առաջարկեց սենատին, որով սենատը պարտաւորվում է նախագահ Կլիվլենտին աջակցել որ նա ձեռնարկութիւններ անի Թիւրքահայերին պաշտպանելու համար։

Моск. Вѣд.

Ռուսչուքից հաղորդում են որ Կոստանդնուպոլսից նոյ. 17-ից այնտեղ ստացուած մի հեռագրից իմացվում է թէ Ռումանիայի կառավարութիւնը ձերբակալել և Թիւրք կառավարութեան ձեռքն է յանձնել յայտնի Միհրան Դամատեանին (Սասունի նախկին հերոսին) և Սարգիս Պալյեանին։

Դիմումներ է արւած Ռուսչուկի հայ գաղթականութեան կողմից Պօլսի պատրիարքին, Անգլիայի և Ամերիկայի դեսպաններին և Ռումանիայի արտ. գործերի մինստրին։

Նոր—Դար.

Սխալ է «Мос Вѣд.»-ի մէջ հրատարակած այն լուրը, թէ յոյները թուղթ են ներկայացրել սուլթանին, խնդրելով որ թոյլ տայ իրենց կոտորել հայերին։ Բանը նրանումն է որ յունաց պատրիարքը ստացել է մի երկու հեռագիր թէ հայերը պատրաստվում են յոյների վրայ յարձակւել և խնդրում են որ թոյլ տրրւի իրենց՝ հայերին պատժելու։ Հեռագրերը շինծու են եղել, որովհետև «ժողովուրդ» բառով են ստորագրուած առանց անունների։

Չը նայելով դրան, Յունաց պատրիարքը հեռագրերը ներկայացրել է սուլթանին և յայտնել դրա հետ որ իր ազգը չափազանց գոհ է և այլն... դրա համար նա ստացել է սուլթանից 1500 ոսկի նւէր և պահանջ, որ իր ասածները գրաւոր կերպով ներկայացւի։ Պատրիարքը թուղթ է խմբագրում և յայտնում ժողովին, բայց ժողովը մերժում է այդ թուղթը տալ։ Շատ կարելի է հրաժարեցնեն պատրիարքին։

Նոր-Դարի Կ. Պօլսի թղթակից.

Շաքիր փաշան այժմ Կ. Պօլիս է։ Նա համաձայնվում է Թիւրքական կառավարութեան բոլոր պահանջները կատարել... Պաշտօններից արձակւած են բոլոր հայ պաշտօնեաներ, Դատեան փաշային (սուլթանի անձնական գանձի մինիստրը) որպէս հաւատարիմ անձի, թողած է իր պաշտօնում։

Моск. Вѣд.

Կէմբել Բաներման, նախկին անգլիական պատերազմական նախարարը. արտասանեց մի ճառ, որի մէջ նա ասաց որ պէտք եան արևելեան կրիզիսը և Թիւրքիայի քրիստոնեաների տառապանքը առեղծագործեց Բերլինի դաշնագիրը. այդ դեսպանախորհրդում Բիկոնսֆիլդը և Սօլսբիւրին յայտնել էին որ դաշնագիրը խաղաղութիւն կը հաստատէր, մինչ գործնականապէս խաղաղութիւնը արտաքին տեսքով է միայն պահպանվում և Անգլիայի պատիւը բծաւորւած է մարդկային արիւնով։

Нов. Время.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԻԺԻՑ

—

18 Դեկտ. 95.

Սրգէն ընթերցողներին յայտնի է որ Դավրէժում մի Նոր կանանց ընկերութիւն էր կազմւել. նոյն ընկերութեան գործադիր ժողովի անդամները սկսել են գործել։

Մօտ երեք ամիս կայ որ կար ու ձևի արհեստանոց և մանկական պարտէզ է բաց արել. եւ այժմ թէ մանկական պարտէզը և թէ արհեստանոցը մօտ 30 հոգիներ երթևեկութիւն ունին, ինչ արդիւնք ցոյց կտայ դեռ չը գիտենք։

Սէր ընկերութիւնը կենդանութեան նշոյլ անգամ չէ արձակում։

Ընթերցասիրաց դրադարանական ընկերութիւնը այս տարի, անցեալ տարւայ պէս չկարողացաւ գործել, որովհետև այդ ընկերութիւնն էլ կանանց ընկերութեան պէս նիւթականը չառատ հովացրած սկսեց գործել. նոյն իսկ առաջին տարին իր ոյժից վեր գործեր բանեց։

2 ամիս սրանից առաջ մի խանութ էին բաց արել, որտեղ պարսկական նամակադրոշմների առևտուր էին անում, այս օրերս նա էլ փակւեց. այսպէս որ տեսնվում է, ընթերցարանն էլ շուտով կփակւի։

Թող ընթերցանիցաց ընկերութեան անդամները նաև մտածեն թէ ումը պիտի ընտրեն այս տարի նախագահ, որ ընկերութեան համար կարողանայ քիչ ու շատ գործել։

Թիֆլիսի դերասանական խմբի անդամ պ. Մաթէոս Աղայեանը սկսել է սիրողների խմբի հետ միասին մի շարք ներկայացումներ տալ։

Ամսոյս 16-ին նա մի ներկայացում տուաւ յօգուտ Ղալայի Հայուհեաց բարեգործական ընկերութեան։

Արամեան դպրոցի ամբողջ հոգաբարձութիւնը հրաժարական է տուել, դեռ նրանց փոխարէն ուրիշները չեն ընտրւել. հոյը փոխանորդը մի քանի անձնաւորութիւնների կանչել էր իր մօտը և իր ուզած անձերի հոգաբարձու ընտրել։

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մարաղա 8 դեկտ. 95

Գիտնալով որ արդար բողոքի ձայնը արձագանք է գտել միշտ ձեր թերթում, ուստի խնդրում եմ չը խնայէք զետեղել հետևեալ երկտողս ձեր պատւական լրագրի մօտիկ համարներից մէկում։

Կատարելապէս զարմացնում է մեզ այն հանգամանքը, որ մի կարգ մարդիկ, որոնք թաղնւած կրթութեան դիմակի տակ անպատիժ կերպով հարստահարում են հասարակական հիմնարկութիւնները, խաղալիք են դարձնում կրթական գործը, դոհում են իրենց անձնական սոսր կրքերին մասամբ, մեծամասնութեան շահը և ապա լրբաբար ծիծաղում հրհռում են նրա—հասարակութեան քթին, որպէս թէ ոչինչ բանից խաբար չեն իրենք։ Իսկ երբ մամուլը երևան է հանում այդ պարոնների անմաքուր գործունէութիւնը, անխնայ մտրակում, խարանում է նրանց և զարթեցնում քնած ժողովրդին՝ ճանաչեցնելով նրան իր կեղեքիչներին, այն ժամանակ նրա՛ք—այդ հասարակական անամօթ դողերը, մտածում են մի հնար, մի միջոց, ազատւելու ամբոխի կատաղութիւնից, արդար զայրոյթից և կրկին շարունակելու իրանց հարըստահարութիւնները։ Ահա մի ժեզւիտական միջոց, որով մեր քաղաքի հոգաբարձուներից երկուսը,—որոնց անունները զանազան հանգամանքներից առ այժմ չեմ կարող տալ,—կամենում են արդարացնել իրենց, անողոք խուժանի ճանկերից ազատւելու համար։ Նրանք մէջից կէս են լինում հաւատացնելու պարզամիտ ժողովրդին, որ իրենց դէմ Շաւիղում գրւածները բոլորն էլ սուտ են և թէ այդ գրողն էլ բողոքականների վարժապետն է, նրա համար է նա այդպէս գրում, որովհետև մեզանից չէ, նրա կրօնքն ուրիշ է, մեր ուրիշ (?!). Նրա համար է մեր Ցօնան վարժապետ (այստեղ փակագծի մէջ աւելացնում են և այն՝ թէ մեր Ցօնան վարժապետի նման վարժապետ ոչ մի տեղում չկայ) մասին վատ գրում, որովհետև ուզում է որ ինքը նրա տեղը վարժապետ լինի և այլն այդ կարգի շաղակրատութիւններ։ Թէ ինչ աստիճանի վրայ է կանգնել մեր այդ հոգաբարձուների իմացականութիւնն ու հասկացողութիւնը մեզ շրջապատող հասարակական երևոյթների վերաբերմամբ, այդ ինքնին ամենաանփորձ ընթերցողն անգամ կարող է իմանալ. դրա մասին ես ոչ մի ասելիք չունիմ. բանն այնտեղ է, որ երբ թէ ես լինելով Շաւիղի Մարաղայի թղթակցութիւնների հեղինակը, անձնական շահերից դրդւած եմ գրում։ Խնդիրն այն չէ հիմա, թէ ով է Շաւիղի Մարաղայի թղթակցութիւնների հեղինակը, ես կամ մի այլ մարդ. դա ուրիշ հարց է, հարցն այն է, որ ինչպիսով պարոն հոգաբարձուները իրենց արդարացնելու նպատակով, գցում են իմ վարկս հասարակութեան աչքում և կամեցել են դարձնում ինձ իմ պաշտօնումս մեր ուսումնարանի վարչութեան առջև։ Եւ անձնական ինչ շահ ինձ. գիտցէք թէ հէնց ես եմ գրողը. միթէ, պարոն հոգաբարձուներ, ունէք ակնկալութիւն կամ կախումն ունեմ ձեզանից։ Եւ լիուի եթէ ես եմ այդ գրողը, լաւ իմացէք որ անկախ լինելով ձեզանից և ոչ մի կապ չունենալով ձեզ հետ, պէտք է գրեմ զուտ ճշմարտութիւն և գործին յամենայն դէպս պէտք է վերաբերւեմ անկողմնապահութեամբ։

Բայց լաւ իմացէք, որ ես երբէք կամք չեմ ունեցել ձեր ուսումնարանը մտնելու և չեմ էլ ունենայ, քանի որ կրթութեան, ուսման սուրբ գործի ղեկը Ցեզմէններին ձեռքումն է գտնվում։ Եւ ինչու ես պէտք է ցանկանամ ձեր ուսումնարանը մտնել. միթէ այնքան բարեսիրտ, ազնիւ ու հասկացող մարդիկ էք որ կարողանաք մեզ հետ բուռ հարկին, բուռ պահանջման եօլա գնալ. գիտէք որ մենք սառը բարբարոսութիւն, քծնութիւն սիրողներից չենք, հետևապէս և մեր՝ ձեզ հետ եօլա գնալը միանգամայն անկարելի ու անբնական կլինէր։ Եթէ ձեզ արդարացնել էք ուզում, ասպարէզ դուրս եկէք, ինչու էք ապա մութ անկիւններից քարեր շպրտում խալխի վրա։ Հաւատացէք որ անպատասխան պիտի թողնէի ձեզ, եթէ որ չխողաթիւրէիք հասարակութեան իմ մասին ունեցած կարծիքը, եթէ որ չպղտորէք միամիտների սիրտը։

Մարաղայի բողոք. ուսուցիչ՝
Միրզա Մելիք—Սայեաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շաւիղի հետ պատահած վերջին մատնութեան դէպքը ստիպում է մեզ այս տարի միայն 48 համար տալով բաւականանալ. եկող տարի կաշխատենք այդ պակասը լրացնել մի փոխարինութեամբ։ Սրանով յայտնում ենք մեր ընթերցողներին, որ ով որ իր բաժանորդագրութիւնը չէ նորոգել 1896-ի համար, նա ոչ մի համար չի ստանալ։ Այս տարեվերջանը Շաւիղը կը լրացնի № 48-ով։

—

Հայկազեան դպրոցի հոգաբարձութիւնը, որպէս պատասխան մեր հարցմունքին այդ դպրոցի մէջ կատարւող խոյտառակութիւնների և կամենալով վերջ դնել մի շարք անկարգութիւններին, նշանակել է նրա համար մի առժամանակեայ տեսուչ, վարձել է մէկ նոր վարժուհի և մի նոր ուսուցիչ կալւոր առակների և ձեռագործի համար։ Այդպիսով այժմ Հայկազ, երկսեռ դպրոցը ունենում է փոքր ի շատէ կանոնաւոր ուսուցիչներ միայն 2 անձ, որոնք եթէ կամենան, մեծ հետ համերաշխութեամբ կարող են մինչև տարւայ վերջը ազատ պահել դպրոցը նորանոր անտեղիութիւններից։ Ինչ վերաբերում է մեր ասելիքներին դպրոցի ներքին կեանքի և ուսուցիչների մասին, մենք այդ թողնում ենք մի աւելի յարմար առթի։ Առ այժմ չենք կարող չասել որ դասերի մէջ պակասում են բնագիտական առարկաները, որ ան-

հրաժեշտ է մի դպրոցի համար, շատացրած են կրօնի դասերը, որ աւելորդ էր անել և փոքր դասարաններում մոց եր են պարտկերէն, ռուս՝ երէն ու ֆրանսերէն լեզուները, որոնցից վ ըջին երկուսը դեռ շատ վաղ են, քանի որ այդ դասարանի մանուկները (10—12 տար.) դեռ մի բառ իսկ հայերէն ուղիղ գրել չը գիտեն և ծանրաբեռնուած են այլ և այլ ազգանունների կերպով դաս տրուող առարկաներով։ Առ այժմ այսքան։

—

Գոյութիւն չունեցող Ընթերցասի ա ընկերութիւնը ուզում է կազմել, որովհետև Դարվազա-Ղազվինի գեկտ.10-ի երեկոյթը բաւական եկամուտ տուաւ։ Բայց, որպէս լսում ենք, երեկոյթի ժողովը, առենայն իրաւամբ, իր գոյացրած փողը երբէք չէ կամենում մի մասնաւոր ընկերութեան գրադարանի յատկացնել, այլ վճռել է դրա՞ը պահել մինչև որ Հայկազեան դպրոցը ունենայ իր սեփական գրադարանը և կամ հիմն ի մի ազգային ընթերցարան անկախ Ընթերցասիրաց ընկերութիւնից, որը միմիայն անս ննների ներից վաղել-գիտէ, իսկ ընթերցարանը բարուքել ե՞ք։

—

Զէյթունի մասին Ռէյտե ի գործակալութեան տուած այն հեռագրները, որոնք յայտնում են որ իբր թէ Զէյթունը առնուած է, հաւանական չեն թու

, որովհետև ռուս. հեռագրական գործակալութեան հեռագիրը այդ մասին այսպէս է ասում. «Զէյթունի հայերի բռնած դիրքը գրաւած է թիւրքաց զօրքերից»։ Ուրեմն ոչ թէ Զէյթունն է որ առնուած է, այլ ապստամբների բռնած մի դիրք, որից յետոյ ինչպէս Ռէյտերի գործակալութիւն լուր տուաւ «ապստամբ երը ամրացան՝ գլաւել են մի ուրիշ նոր դիրք»։

—

Սկ վտիայում «Սկոտիշ-արմեսան» անունով (Սկոտա-Հայկական) մի զօրեղ ընկերութիւն է կազմակերպուել, որին նախագահ է եղել Արտայի դուքսը։ Այդ ընկերութիւնը ձեռնարկել է շարժումներ առաջ բերել ի նպաստ հայերի Սկոտիայում և այդ նպատակով նա Ամերիկայից հրաւիրել է Հրանտ Քիրէչեան անուանով մի պերճախօսանգ լեազէտ հայի, միութիւնների ճառախօսելու համար։

—

Արտաբիից պ. Մարգար Տ. Յակովբեանը մեզ խնդրում է տպագրել հետևեալը։ Շաւղի № 43-ում ներքին լուրերի մէջ տպուած Աքտաբիլցու լուրը որ վերաբերում է «ազգ.-դրամարքային»— ստ լուրատուի—իրեն են վերագրում, ուստի խնդրում է խմբագրութիւնից մի քանի թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, հայտնելով յայտնել որ ինքը չէ այդ լուրատուն։ Խմբագրութիւնը պիտէ այդ լուրը ով է տուել և յայտնում է որ պ. Մարգար Տէր Յակովբեանցը չէ նա, այլ մի ուրիշը։

—

Էնզէլիից նոյն տեղի դպրոցի մասին մեզ գրում են, որ այնտեղ այժմ հաճախում են 20 հոգի. տեղացիք դոհ են իրենց ուսուցչից և մտադիր են առաջիկայ տարին սկսել սեփական ուսումնարանը ապահովեցնել մի անձեռնմխելի գումարի տոկոսով։ Դպրոցը ունի այժմ 450 թուման կանխիկ փող և հոգաբարձութիւնը ձեռնարկութիւններ է արել այդ գումարը շատացնելու։

—

Մեզ հաղորդում են որ Բարֆրուշի փոքրաթիւ հայերն ևս իրենց մէջ հանգանակութիւն են բացարել Հայաստանի սովեալների համար և գոյացրել է մոտ 600 բուբլի (300 թ.) դրամ։ Պիտի իմանալ որ Բարֆրուշի մէջ ընդամենը հազիւ 20 հոգի են։ Պատիւ է բերում Բարֆրուշի հայերին նրանց այդ քայլը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԷԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

(Շարունակութիւն տես № 45)

Բելորիսցիներից յետոյ յիշվում է մի տարօրինակ աղանդ որ յայտնուեց 1894 թուականի վերջերում Դուշիտելի (խեղճիշներ) անունով։ 1895 թուին ստիկանութիւնը երևան հանեց Դարիվկոկչայոկ գաւառում շատ խեղճացած անձեր և դրա համար սկսեց խուզարկութիւն։ Շերբակալուեցին շատերը, բայց յայտնուեց որ գործը ուրիշ տեսակ է։ Թշուառ գիւղացիք մտածելով հասել են այն եզրակացութեան որ մահը երբէք սարսափելի չէ, բայց սարսափելի է ճգնաժամը։ Վճռվում է օգնութեան գնալ «մահուան հրեշտակին» և ահա աղանդաւորները, երբ իրենցից մէկը վերջին օրհասի ժամանակ տանջվում է, ծնողները կամ զրացիները հաւաքվում են, հիւանդին տանում մի առանձին տեղ և այնտեղ ամենայն պարզութեամբ մի բարձ դնելով բերանի վրայ... խեղդում են։ Բայց այդ մ ջոցին դիմելուց առաջ գիւղի կախարդը (գնախար) դեր է խաղում. նա է որ այդ «բարեպաշտ ծէսի» վճիռը տալիս է։

Այս աղանդը հետզհետև զարգանում է, որովհետև դատարանը արդարացնում է աղանդաւորներին։

Բէգունները (վազողներ) աղանդաւորներ են որոնք մի տեղից միւսն են վազում, ամբողջ Ռուսաստանն են մանդալիս առանց մտածելու մի տեղ մնալ։ Աղանդի մէջ մի նոր մարդ որ ընդունվում է նրանց՝ ոչնչացնում է իր անցեալները, որոնք նկատվում են որպէս սատանայի գործը և ընդունում է որ կառավարութիւնը, եկեղեցին և օրէնքները սատանայական ծագում ունեն. ոչ ամուսնութիւն են ընդունում, ոչ հարկատուութիւն և ոչ էլ հպատակութիւն կառավարութեան։ Նրանց կրօնական պատկերների մէջ միշտ այլոց կայ մի պատկեր, որի մէջ սատանան մի մոմ է տալիս թագաւորին և հրաւիրում է նրան իր հրամանների կատարողը դառնալ երկրի վրայ։ Յաճախ այդ աղանդին պատկանողները դիմում են խիստ ցոյցերի։ Օրինակ Սամարին անունով գիւղացին մտել է ռուս եկեղեցին, յարձակել քահանայի բայ, ստիպել է նրան հեռանալ սեղանից, յետոյ ցած է շպրտել հաղորդութիւնը և գոռացել «ես քանդում եմ սատանայի գործը»։ Այդ գիւղացին դատուեց և մշենջենական պաժանակիր աշխատութեան դատապարտուեց։ Նա ցաւել է որ մահուան չեն դատապարտել իրեն որպէսզի ուղղակի երկինք գնար։

Բէգունները, ըստ «Եպարх. Вѣд.» կրօնական պաշտօնական թերթի (1896 ապրիլ) մեծ ծաւալ են ստանում և շատանում Ալտայի (Սիբերիա) գաւառում։

Դրա նման մի աղանդ է Սուտայէվցիների աղանդը, որը ոչ պատկեր, ոչ հաղորդութիւն է ընդունում և ոչ էլ սեփականութեան գաղափար։ Այդ աղանդը սկսել է Տվերում 1880 թուին Սուտայեվի ձեռամբ։ Ասում են որ Տոլստոյը բարեկամաբար է ընդունել նոր աղանդի հիմնադրին, որ ման է գալիս եղել գաւառներում և քարոզելիս որ ճշմարիտ քրիստոնէութիւնը բովանդակում է «սիրիր քո ընկերիդ» խօսքերի մէջ։ Միայն մի կրօն կայ, այն է սիրոյ և ողորմածութեան կրօնը. աւելորդ են ծէսերը, քահանաները. եկեղեցի, պատկեր և սատանաներ. դրանք մարդկանց հնարածներ են և ճշմարտութեամբ ապրողները պիտի դէն շպրտեն այդ բոլորը։ Սուտայեր ինքը իր օրինակով պնդում է իր քարոզածները և տանջվում յանուն նրա։ Այդ աղանդն էլ սկսվում է սաստիկ տարածել։

Այսպէս եթէ մի առ մի թեմ և խօսեմ այն բազմաթիւ աղանդների մասին, որոնք վրխտում են Ռուսաստանում, յօդուածս շատ կ'երկարի և սակայն շատ հետաքրքիր են դուխաբորները, Ստուածոյ որդիները՝ որոնք պատող դէրվիշների պէս այնքան պտտում են որ խելայեղ ցած են ընկնում. ծոմապահները, որոնք կոմս Տոլստոյին որպէս աղանդապետ են ընդունում և բոլորովին միս չեն ուտում, այլ միայն հացով և թէյով են կերակրվում... սոսկալի և գրէթէ խենթայինն «խորհրդաւոր և ոգեկան քրիստոնեաները», որոնք աղօթքի ժամանակ էքստազի մէջ ընկնելով՝ վերքեր են բանում, պարում, լալիս, գոռում, փրփրում և որոնք Բաբովցի ևս կոչվումեն, իրենց հիմնադիր Բաբովի անունով...

Ամենից աչքի խփող աղանդը «ժխտողների» աղանդն է։ Սրանք ուրանում են Ստուծուն, սատանային, երկինք, դժոխք, թագաւոր, սեփականութիւն, օրէնք...

Դրանցից մէկի, Զիշկինի դատից մի կտոր դաղափար կը տայ նրանց հաւատալիքների մասին։

Ահա հարցուփորձը.

—Ի՞նչ կրօն ունիս.

—Ոչ մի կրօն.

—Ո՞ր Ստուածն ես հաւատում.

—Ոչ մէկի, ձեր Ստուածը ձեզ է պատկանում ինչպէս և ձեր սատանան, որոնց երկուսն էլ դուք էք հնարել։

—Սա քո կինն է.

—Ոչ, դա իմ կինը չէ.

—Ի՞նչպէս է ուրեմն որ միասին էք ապրում.

—Մենք միասին ենք ապրում, բայց նա իմը չէ, նա ինքը իրենն է.

Դատաւորը դառնում է կնոջ.

—Սա քո՞ ամուսինն է.

—Նա իմը չէ, ինքը իրենն է.

—Սա ձեր որդին է.

—Ոչ, նա մերը չէ. նա մեզ հետ է ապրում նա մեր արիւնից է բայց ինքը իրենն է, իրեն է պատկանում և ոչ ոքի։

Իսկ այդ վերարկուն որ հագել ես քոնը չէ.

—Նա իմ մէջքի վրայ է բայց իմը չէ. նա առաջ պատկանում էր ոչխարին, այժմ ինձ է ծածկում, բայց ով գիտէ թէ վաղը որին կը ծածկի....

Այժմ թեմ մի քանիսը այն զարհուրելի աղանդներից, որոնք ծագել են Ռուսաստանի խորքերում և որոնք արտայոլում են ժողովրդի յուսահատ դրութիւնը և միստիցիզմով փրկութիւն փնտռելու հիւանդոտ հոգեբանութիւնը։

Սրանից մի քանի ամիսներ առաջ մոսառապահը Զչիրիայէվկա (Սամարա նահանգում) դիւղի ետևում գտնուող մի խրճիթի մօտից անցնելիս լսում է սարսափելի ձայներ, հեկեկանք և աղաղակ։ Մօտենում է և ինչ տեսնէ։ Երեք կանայք. բոլորովին մերկ լալիս էին և աղօթում. նրանց նիհարութիւնը կմախքի էր նմանում և արդէն լցվում էր որդերով։ Նրանց տանում են դիւղը, ուր և կանանց մէկը մեռնում է։ Գիւղացիները մեռնողին ստիպում են որ քահանայ կանչէ, բայց նա մերժում է և չէ էլ կամենում որ իր գերեզմանի վրայ խաչ անկի։ Ոստիկանութիւնը այնուհետև խուզարկութիւններ է անում ամենուրեք և երևան է հանում ուրիշ կանանց էլ նոյն օրհասական դրութեան մէջ ընկած։ Հարցուփորձը երևան է հանում մի ամբողջ [illegible] աղաղ, [illegible] տասն 40 դոհ էր տաբել.....

Այսպէս, ժամանակ առ ժամանակ, իդէալի ծարաւը կամ դրութեան սոսկալի լինելը այն աստիճան այլասերում է մարդկանց, որ հասցնում է նրանց խմբական անձնասպանութեան։ Դրան իբր ապացոյց կարելի է յիշել հռչակաւոր Ֆալալէյ վարդապետի աղանդը, որ քարոզում է թէ մարդս փրկութեան ուրիշ ոչ մի միջոց չունի, եթէ ոչ միայն մահը։ Նա մի անտառի մէջ էր որ հաւաքում էր աշակերտներ և համոզում նրանց այս կեանքի դառնութիւնների տեղական լինելը, ապա մահուան քաղցրութիւնը։ Պրօպագանդը ազնց և ահա Հայր Ֆալալէյին աշակերտները մի օր վճռեցին վերջ դնել իրենց «մեղսալից կեանքին»։

Մի գիշեր, 84 հոգի միացան մի մառանում Պերիվոդինկա գետի մօտ, սկսեցին ծոմապահութեան և աղօթքի։ Գիւղացիները շրջապատեցին նրանց ժողովատեղին յարդով և փայտով և սպասեցին նշանի վառելու համար։ Մի կին սակայն, մահուան սարսափից յաջողվում է փախչել և ոստիկանութեան իմաց տալ։ Հասնում են, բայց դիւղերները հասնելուց առաջ կրակ են տալիս փայտերին և «յանուն Քրիստոսի» մեռնում։ Նրանցից միայն մէկը—Սուլկովը աղատուած մահուանից սկսում է բարոզել նորից և—ժողովրդի կենաքը թէ յուսահատութիւնն է պատճառը—յաջողվում է վաթսուն ընտանիք շահել, որոնք վճռում են մեռնելու միասին։ Այս անգամ մահուան ձեռակերպութիւնը երկար չէ լինում, բայց զարհուրելի։ Պետրով գիւղացին մտնում է իր դրացի Նիկիտինի տունը, ստանում նրա կնոջ և որդիներին և այսպէս արիւնոտ կացիններ մանդալով գիւղում մի ընդհանուր կոտորած են անում։ Իվան Պոտոկի մառանում 12 գիւղացիներ իրենց կանանց հետ ապաստում են մահուան։ Հերթով բոլորը իրենց զլուխները դնում են կոճղի վրայ և Պետրովը կտրտում է նրանց, կատարելով «փրկութեան գործը»։ Յոգնած, Պետրովը վերջում իր գլուխը դնում է կոճղի վրայ և նոր աղանդի Պաւղոս Սուլկովը մորթում է նրան....

Այս բոլորը պատմում են մեզ ռուսական թերթերը, որպէս և Զադկինի նոր աղանդի մասին։ Այդ «ներշնչած» խենթը սկսում է

արգելել որ նեռը (անտիխրիստ) աշխարհք է եկել և որ նրա ձեռքից պիտի փախչել դէպի անապատ և մեռնել քաղցածութիւնից:

Նա հաւաքում է շատ հաւատացեալներ, հասնում է մի անապատ խորքում, հրամայում է կանանց պատրաստել մահուան հագուստներ և ապա յայտնում որ երկնքի շնորհքին արժանի լինելու համար պէտք է 12 օր և 12 գիշեր մնալ առանց ուտելու և առանց խմելու: Սոսկալի է լինում տեսարանը. մանուկները գալարվում են ցաւից, օդն են լցնում իրենց ճիչերով, հաց ու ջուր են ուզում...Թըշուառներից մէկը չը կարողանալով այդպիսի տանջանքների դիմանալ փախչում է և Ձադկինը վախենալով որ ոստիկանութիւնը կարող է վրայ հասնել, վճռում է որ մահը պիտի փութացնել: Սկսում են նախ սպանել մանուկներին, յետոյ կանանց և հուսկ ուրեմն մարդկանց.... Երբ ոստիկանութիւնը հասնում է, նա ողջ է գտնում միայն Ձադկինին և երկու ուրիշ առաջնորդների, որոնք իրենց ոգևորութեան մէջ, մոռացել էին անշուշտ իրենք իրենց սպանել....

Դեռ ինչե՜ր չէ կարելի քաղել ռուսական թերթերից, որպիսի սոսկալի, աբսուրդ աղանդների գոյութեան պատմութիւններ կարելի է կարդալ.... կրօնական աղանդներ, միմիանցից ղարհուրելի կամ անմիտ՝ յաջորդում են միմեանց... Թշուառ, հալածուող, զրկուող ամբոխը, յուսահատ գիւղացին կամ իր ապագայի համար լիովին անյոյս ժողովուրդը դիմում է կրօնին, նրա մէջ է փնտռում իր ցաւերին դարման, բայց որովհետև այդ դարմանը, երկար տարիների փորձերից յետոյ, աղօթքը կամ քահանան և կամ ծէսերը չեն տալիս, նա հետևում է առաջին յուսահատ քարոզչին, որ քարոզում է մահ, խիստ ցոյցեր և կամ կտրուկ միջոցներ՝ փրկւելու ամէն բանից.... այս դասն անտանելի կեանքից, ուր նա որդոց որդի միմիայն վիշտ և տանջանք է տեսել, նրա մէջ սնւել, որից նա ոչ մի լաւ բան չէ սպասում...

Բայց միայն տգէտ, թշուառ կամ յուսահատ զրկւած կամ իդէալի իրացող ամբոխը չէ որ դիմում է դէպի կրօնը.., ոչ վերջերս ծագած մի սաստիկ վէճ ակներև է անում նաև այն հանգամանքը որ շատ լուսաւոր մտքեր, գիտուններ և խորհողներ, երևի յոգնած անվերջ փնտռելուց և շատ հարցեր լուծելու անկարողութիւնից, յուսահատ՝ որ դեռ ոչինչ պարզ չէ և որ գիտութիւնը չէ տալիս հանգստութիւն մտքի և անդորրութիւն ոգու, սկսել են պնդել—որ գիտութիւնը սնանկութիւն է ցոյց տալիս, որ նա ոչ մի բան չէ պարզում և որ կրօնն է այդ անդորրացնող, մխիթարող և հանգստացնող միջոցը..,.

Այստեղ երևան է գալիս մի խիստ և երկարատև վէճ գիտութեան և կրօնի մէջ: Մի կողմից—կրօնի կողմից կան Ֆեր. Բրունետիէր (խմբագիր Revue de deux mondes-ի, նշանաւոր կրիտիկոս) Լև Տոլստոյի պէս հեղինակաւոր անձեր, իսկ միւս կողմից Բերդոլէ, Սպենսեր, Ֆերրարի և այլ հռչակաւոր գիտնականներ որոնք միմեանց դէմ են նետում յօդւածներ մի կողմից աշխատելով ցոյց տալ կրօնի կարեւորութիւնն ու գիտութեան սնանկութիւնը, իսկ միւս կողմից, սքանչելի ոգևորութեամբ է ջախջախիչ փաստերով այդ մեծ գիտնականները փշրում են միստիցիզմը և ապացուցանում որ գիտութիւնն է ճշմարտութեան, բարօրութեան միակ միջոցը մարդկութեան համար և որ նա եթէ մինչև այժմ չէ յաջողել շատ հարցեր լուծելու պատճառը և խոչընդոտը ունեցել է միշտ կրօնը և նրան պաշտպանող կրօնաւորական ձգտումները....

Այդ վէճը շատ հետաքրքիր է և արժանի նրա մասին երկարօրէն խօսելու: Ես այդ կանեմ մի ուրիշ անգամ, որովհետև ձեռքիս տակ ունիմ երկու կողմից գրւած բոլոր յօդւածներն էլ:

Վ. Փ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Վենեցուէլայի հարցը.—Վերջին հեռագիրները համառօտ կերպով հաղորդում են Միացեալ Նահանգների Նախագահ Կլիվելենդի պատգամի մասին կոնգրեսում՝ Վենեցուէլայի հարցի համար և թէ որքան այդ պատգամը մեծ տպաւորութիւն թողեց Ամերիկայում և Միացեալ Նահանգներում: Համառօտապէս պատմենք այդ հարցի էութիւնը: 1814 թւից սկսած Վենեցուէլի հասարակապետութեան և բրիտանական Գուիենեայի կառավարութիւնները (Ամերիկայում) զբաղւած էին միշտ որոշելով իրենց հողերի սահմանները: Անգլիան օգտւելով նրանից որ աւելի ուժեղ է քան Վենեցուէլան, ջանում էր լայնացնել իր հողերը՝ խլելով հասարակապետութեան հողերից: Այսպէս, երկու դրացի հողատէրերի մէջ վիճելի հող մնաց մի մեծ տարածութեամբ, որին գլխաւորապէս անգլիացիները տիրեցին և որին սակայն Վենեցուէլան իւրենն էր համարում: Այս դրութիւնը տևեց մինչև 1880-ական թւականները, երբ Միացեալ Նահանգները միջամտեց վէճի մէջ և առաջարկեց Անգլիային, խնդիրը վճռել ընկերական դատաստանով: Գլադստոնի մինիստրութիւնը ընդունեց այդ առաջարկը բայց մինիստրութիւնը շուտով ընկաւ և յաջորդեց Սոլսբերիի փոխանորդ Ռոզբէրին նորից սկսեց բանակցել՝ գործը խաղաղութեամբ վերջ դնելու համար. այդ բանակցութիւնները խառնւեցին նրանով որ Վենեցուէլեան և անգլեական սահմանապահ զօրքերի մէջ կռիւ տեղի ունեցաւ և անգլիացիք յաղթեցին: Դրան հետևեց ծանուցագրեր որը վերջացաւ նրանով որ երկու պետութիւնների մէջ խզւեցին կապերը 1887 թւին: Միացեալ Նահանգները նորից մէջ մտաւ որ նորից գործը խաղաղութեամբ վերջացնեն, բայց Անգլեան լիովին մերժեց ու և է բանակցութեան մէջ մտնել: 1895 թւի յունւարին նորից տեղի ունեցաւ ընդհարում երկու երկրի սահմանապահ զօրքերի մէջն: Մի խումբ զինւած վենեցուէլացիներ, գրգռւած նրանից որ անգլեական սահմանապահ զօրքը արգելք էր դրել վիճելի հողից փայտ տանել, յարձակւեց անգլիացոց վրայ. բռնեցին նրանց և գերի տարան. բայց նրանք շուտով ազատւեցին: Անգլիան պահանջեց բաւականացումն և երբ Վենեցուէլեան ուշացրեց պատասխանել. տւաւ նրան ուլտիմատում (վերջնագիր): Այն ժամանակ Վենեցուէլայի Նախագահ Կրեսպօն դիմեց Միացեալ Նահանգների Նախագահին. և այս նորից առաջարկեց Անգլիային գործը վերջացնել ընկերական խաղաղ դատաստանով: Ինչպէս գիտեն գուցէ շատերը Ամերիկական Մօնրօյի մի օրէնքով Միաց. Նահանգները չէ կարող թոյլ տալ որ և է Եւրոպական պետութիւն ուժով լայնացնէ իր իշխանութիւնը Ամերիկական ցամաքի վերայ: Այդ պրինցիպի վրայ էր, որ Կլիվելենտ Նախագահ մատնանիշ արեց Սօլսբերիին ուղարկելով իր առաջարկը և աւելացնելով որ եթէ Անգլիան չընդունի Միաց. Նահանգների խաղաղասիրական առաջարկը, Միացեալ Նահանգները պատրաստ են ընդունել դա հետևանքը ինչ որ էլ լինի էր իսկական սահմանը: Այնուհետև Միացեալ Նահանգների Նախագահ առաջարկեց ընտրել սահմանը որոշող մասնախումբ, որ պարզէ հարցը և երբ հարցը պարզւի, այն ժամանակ Միացեալ Նահանգները կընդունի յարգել տալ իր իրաւունքները և կը կատարի իր պարտքը:

Այս սպառնական խօսքերն էր, որ պահ մի կարծել տւաւ թէ Անգլիայի և Միացեալ Նահանգների մէջ պատերազմ է ծագելու:

Այս հարցի շարունակութեանը Շաւիղի ընթերցողը կարող է հետևել մեր թերթի հեռագիրներով:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլիս. 29 դեկտ. (Ն. Տ.) Սուլթանը ուղարկել է Արիֆ փաշային Պետերբուրգ թանկագին ընծաներով կայսեր ներկայացնելու համար: Զայն կայսերն րան մի յատուկ յանձնարարութիւն է արւած և վերջերումս մի յայտնի բարեկամութիւն է կատարւում Թիւրքիայի և Ռուսիոյ միջև:

Լոնդոն. 29 դեկտ. Գեներալ Սէր Ֆ. Սկոտը հասել է Մասսվա իր վաշտի հետ և սըր Ֆրենսիսը որոշել է գնել Աֆանի ցեղի շարժման, որոնց բռնած դիրքը կասկած է ազդում, որովհետև նրանք կարող են յարձակւել անգլիացոց վրայ:

Կ. Պոլիս. 30 դեկտ. Զէյթունի ապստամբներին զինւած ույժ է հասել և նրանք բռնել են մի նոր դիրք:

Վաշինգտոն. 30 դեկտ. Վենեցուէլայի սահմանները որոշող յանձնախումբի անդամ է նշանակւած դատաւոր Բրուհերն Կլիվելենդ նախագահի կողմից:

Լոնդոն. 30 դեկտ. Ոսկեափի (Գոլդ Քօստ) Նահանգապետը (Աֆրիկէ) յայտնագործել է որ Աշանթիի Լոնդոն այցելող դեսպանների թղթերը կեղծ են եղել որով և նրանց բանակցութիւնները անարժէք են համարվում:

Պետերբուրգ. 31. դեկտ. Հայերին կարեկցող անգլեացիների առաջարկը որ Ռուսիան պիտի յանձն առնի Հայաստանը խաղաղացնելու այստեղ լաւ ընդունելութիւն չէ գտել:

Կ. Պոլիս. 29 դեկտ. Թիւրքերի շատ ձերբակալութիւններ են եղել այստեղ. Նրանց մէջ կան կառավարութեան 3 գրագիրներ, որոնք ամբաստանվում են որպէս կազմակերպող մի նոր ցոյց ընդդէմ ներկայ ռէժիմի:

Վաշինգտոն. 2 յուն. Կլիվլենտը նշանակել է 5 անձ, Վենեցուէլայի սահմանները որոշելու համար:

Մելբուրն 2 յուն. Յայտնի երգիծաբան գրող Մարկ Տուէնը հասել է Հնդկաստան—Կալկաթա: Նա ճառեր կը կարդայ Հնդկաստանի գլխաւոր քաղաքներում:

Կ. Պոլիս 2. Սուլթանը ընդունել է Հալէպի հիւպատոսների միջնորդութիւնը, որոնք Զէյթունում կարգադրութիւններ են անում ապստամբների անձնատուր լինելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական պարլամենտը բացւելու է յունվար 30-ին (ն. տ.)

—Լուր է պտտում որ Աբդուրահման խանը դժգոհ է իր Նասրուլահխան որդու Անգլիա գնալու հետևանքներից և դիտաւորութիւն ունի պատժել նրան. իր կողմից որդին մեղադրում է անգլիացիներին, որ նրանք չը կատարեցին իրենց խոստումը: Անգլօ-աֆղանական յարաբերութիւնները լարւած են երևում:

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ուրմիա. Միհրան Բաղդասարեան.—Գանգատում էք որ Ուրմիայի մէջ տեղի ունեցող վերջին դէպքերի մասին ճշմարտութիւններ չենք տպում: Որո՞նք են այդ ճշմարտութիւնները, գրեցէք և ապա գանգատէք:

Մեր գաւառական բոլոր թղթակիցներին.—Խնդրում ենք գրել կարճ և ձայնի ծաւալը միշտ աչքի առջև ունենալ. շատ թղթակցութիւններ, երկար գրւած լինելուն համար չեն տպագրվում, որովհետև նրանց կրճատել կամ անհնար է լինում կամ ժամանակ գոհել անկարելի:

Բուշիր. Կ. Զէյթունեան «Քաղւածքը» չի տպւի. շնորհակալութիւն ձեր նեղութեան համար:

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ“

ՎԷՊ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՅԻ

Գինն է 60 կոպէկ

Դիմել այս հասցէով Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарлянцу.

Թիֆլիսում վաճառվում է նաև Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցներում:

7—10